

ԱՅՕ՛ ԱՌԱՋԱՐԿ 3-ԻՆ

ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Ի՞ՆՉ Է ԱՆՈՒՄ ԱՌԱՋԱՐԿ 3-Ը

- Առաջարկ 3-ը մշտական ֆինանսավորում է ապահովում դպրոցների և առողջապահության համար:
- 2012 թվականից ի վեր Կալիֆոռնիայի ամենահարուստ 2%-ը վճարում է փոքր-ինչ ավելի բարձր եկամտային հարկի դրույքաչափով (1–3 տոկոսային կետով)՝ նպաստելով մեր դպրոցների ֆինանսավորմանը:
- Առաջարկ 3-ը պարզապես երկարաձգում է ամենահարուստ 2%-ի համար գործող այս հարկային դրույքաչափերը՝ հաշվետվողականության խիստ պահանջներով, որոնք ապահովում են, որ գումարն անմիջապես հասնի դպրոցներին, ոչ թե Սակրամենտոյի քաղաքական գործիչներին:

ՍԱ ՆՈ՞Ր ՀԱՐԿ Է

- Ո՛չ: Առաջարկ 3-ը նոր հարկ չէ և չի բարձրացնում հարկերը: Կալիֆոռնիայի ամենահարուստ 2%-ը կշարունակի վճարել այսօրվա դրույքաչափերով՝ աջակցելով կրթությանը, առողջապահությանը և սոցիալական պաշտպանության կենսական ծրագրերին:

ՈՐՔԱ՞Ն ԳՈՒՄԱՐ Է ԱՊԱՀՈՎՈՒՄ ԱՌԱՋԱՐԿ 3-Ը

- Միջինում՝ **տարեկան 10 միլիարդ դոլար** կենսական նշանակության եկամուտ:

ՈՐՏԵ՞Ղ Է ՈՒՂՂՎՈՒՄ ԳՈՒՄԱՐԸ

- Անմիջապես դպրոցներին: Այս եկամուտները հաշվառվում են Կալիֆոռնիայի Սահմանադրությամբ արդեն իսկ պահանջվող դպրոցների ֆինանսավորման մակարդակն ապահովելու համար, որը հայտնի է որպես Առաջարկ 98-ի երաշխիք:
- Այս պահանջի կատարման շնորհիվ միլիարդավոր դոլարներ են ազատվում առողջապահության, երեխաների խնամքի, անտառային հրդեհներից պաշտպանության, առաջնագծի աշխատողների և այլ կենսական ծրագրերի համար:
- Հենց Առաջարկ 3-ով հավաքագրված գումարն անմիջապես ուղղվում է դպրոցներին և համայնքային քոլեջներին. 89%-ը՝ մանկապարտեզից մինչև 12-րդ դասարանների կրթությանը, իսկ 11%-ը՝ համայնքային քոլեջներին:

ԻՆՉԻ՞ ՀԱՄԱՐ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ

- 2012 թվականից ի վեր Առաջարկներ 30-ի և 55-ի շնորհիվ **դպրոցներն ու համայնքային քոլեջները ստացել են մոտ 120 միլիարդ դոլար**՝ նահանգի այլ միջոցներ ազատելով երեխաների առողջապահության, Medi-Cal-ի և նահանգային այլ ծրագրերի համար:

ԿԱ՞Ն ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- Այո՛: Առաջարկ 3-ը ներառում է հաշվետվողականության խիստ միջոցներ՝ երաշխավորելու, որ գումարը հասնի դասարան:
- Միջոցներն անմիջապես հատկացվում են տեղական դպրոցներին և համայնքային քոլեջներին:
- Քաղաքական գործիչները չեն կարող տնօրինել այդ գումարը, այլ նպատակների ուղղել այն կամ թեկուզ մեկ դոլար ծախսել բյուրոկրատական կամ վարչական ծախսերի վրա:

ԻՆՉՊԵ՞Ս ԻՄԱՆԱՆՔ, ՈՐ ԳՈՒՄԱՐՆ ԻՍԿԱՊԵՍ ՃԻՇՏ Է ԾԱԽՍՎՈՒՄ

- Յուրաքանչյուր դոլարի օգտագործումն ամեն տարի ենթարկվում է աուդիտի:
- Այն ոչ նպատակային օգտագործող ցանկացած պաշտոնատար անձ ենթակա է քրեական հետապնդման և քրեական պատժի:

Ի՞ՆՉ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ԱՌԱՋԱՐԿ 3-Ը ՉԸՆԴՈՒՆՎԻ

- **Մեր դպրոցներն առաջինն ու ամենածանրն են տուժում:** Կալիֆոռնիայի պետական դպրոցների և համայնքային քոլեջների 8 միլիոն սովորողներին կսպառնան ֆինանսավորման միլիարդավոր դոլարների կրճատումներ, ուսուցիչների կրճատումներ և գերբեռնված դասարաններ:
- **Մեր առողջապահությանը հսկայական կրճատումներ են սպառնում:** Առաջարկ 3-ն ազատում է միլիարդավոր դոլարներ՝ նպաստելով երեխաների, տարեցների և ընտանիքների համար Medi-Cal-ի ֆինանսավորմանը: Առանց Առաջարկ 3-ի՝ ընտանիքները կարող են զրկվել կանխարգելիչ բուժօգնությունից, մատչելի դեղատոմսային դեղերից և Medi-Cal-ի ապահովագրական ծածկույթից, որից օգտվում են միլիոնավոր մարդիկ:
- **Սովորողները կտուժեն, մինչդեռ միլիոնատերերի և միլիարդատերերի հարկերը կնվազեն:** Տուժողների թվում են ցածր եկամուտ ունեցող սովորողները, հաշմանդամություն ունեցող երեխաները և արդեն իսկ խիստ սուղ միջոցներով գործող դպրոցները:

YesProp3CA.com



ԱՌԱՋԱՐԿ 3-Ը ՄԻԼԻԱՐԴԱՏԵՐԵՐԻ ՀԱ՞ՐԿՆ Է

- Ո՛չ: Դա Առաջարկ 40-ն է՝ նույն քվեաթերթիկում ընդգրկված առանձին նախաձեռնություն:

Ո՞ՐՆ Է ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

- **Առաջարկ 3-ը պահպանում է ամենահարուստ 2%-ի համար գործող եկամտային հարկի դրույքաչափերը**՝ նույն դրույքաչափերը, որոնք գործում են 2012 թվականից ի վեր:
- **Առաջարկ 40-ը նոր հարկ է:** Դա Կալիֆոռնիայի մոտ 200 միլիարդատերերի ունեցվածքի նկատմամբ նոր՝ միանվագ 5% հարկ է, որը պետք է վճարվի 2027 թվականին: Էական տարբերությունն այն է, որ Առաջարկ 40-ը չի ներառում թափանցիկության կամ վերահսկողության հստակ միջոցներ՝ ապահովելու միջոցների նպատակային ծախսումը:
- **Առաջարկ 3-ը միայն երկարաձգում է արդեն գործող դրույթները:** Ընտրությունը 2012 թվականից գործող դրույքաչափը պահպանելու և դրա գործողությունը դադարեցնելու միջև է:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԱՋԱԿՑՈՒՄ ԱՌԱՋԱՐԿ 3-ԻՆ

- Ուսուցիչները, բուժքույրերը, հրշեջները, դպրոցների աշխատակիցներն ու ծնողները: Մարդիկ, որոնք աշխատում են այս գումարով ֆինանսավորվող դասարաններում և կլինիկաներում:

ՈՎՔԵ՞Ր ԵՆ ԻՐԵՆՑ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՏՆԵԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Կալիֆոռնիայի ուսուցիչների ասոցիացիան, Կալիֆոռնիայի ուսուցիչների ֆեդերացիան, Կրթության ազգային ասոցիացիան, Կալիֆոռնիայի դպրոցների աշխատակիցների ասոցիացիան, Կալիֆոռնիայի նահանգային ծնողների և ուսուցիչների ասոցիացիան, Կալիֆոռնիայի բուժքույրերի ասոցիացիան, Կալիֆոռնիայի պրոֆեսիոնալ հրշեջների միությունը, Կալիֆոռնիայի դպրոցական բուժքույրերի կազմակերպությունը, Planned Parenthood Action Fund-ը, SEIU California-ն, AFSCME California-ն, Կալիֆոռնիայի բժշկական ասոցիացիան և Կալիֆոռնիայի կին ընտրողների լիգան:

ԱՄԵՆԱԿԱՐԵՎՈՐԸ

Առաջարկ 3-ը երկարաձգում է ամենահարուստ 2%-ի համար գործող նույն դրույքաչափերը, որոնցով 2012 թվականից ֆինանսավորվում են մեր դպրոցները՝ պահպանելով հաշվետվողականության նույն խիստ պահանջները: Այն ոչ մեկի հարկերը չի բարձրացնում:

Գովազդի համար վճարել է Yes on Prop 3 sponsored by education and labor organizations.
Գովազդային հանձնաժողովի հիմնական ֆինանսավորողները՝
California Teachers Association
National Education Association
California School Employees Association
Ֆինանսավորման մանրամասները՝ www.FPPC.ca.gov